ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՐԱԳԻՐ

«Միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա, հանրակրթություն և մասնագիտական կողմնորոշում. հիմնախնդիրներ և լուծման ուղիներ» թեմայով համայնքահեն քննարկումներ ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Շիրակի մարզի Գյումրի և Տավուշի մարզի Իջևան համայնքներում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է «Գործընկերություն և ուսուցում ՀԿ-ի/ԳՈՒՄ կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ «Սոցիալական գործընկերություն և զարգացում. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար» ենթադրամաշնորհային կոնսորցիումային ծրագրի շրջանակներում: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն ԳՈՒՄ ՀԿ-ն և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները: Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում է ԳՈՒՄ ՀԿ-ի տեսակետներն ու կարծիքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3

2. Մեթոդաբանություն----------4

3. ՀՀ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա կապի և հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրներ և լուծման առաջարկություններ ՀՀ Սյունիքի մարզում----------5-6

4. ՀՀ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա կապի և հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրներ և լուծման առաջարկություններ ՀՀ Տավուշի մարզում----------7-8

5. ՀՀ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա կապի և հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրներ և լուծման առաջարկություններ ՀՀ Շիրակի մարզում----------9-14

1. Ներածություն

Միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկայի, հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշում գործընթացներում առկա խնդիրների վերաբերյալ ՄԿՈՒ և հանրակրթական ոլորտի ներկայացուցիչների ձայնը լսելի դարձնելու և նրանց հուզող խնդիների վերաբերյալ քննարկումների նպատակով, «Գործընկերություն և ուսուցում» (ԳՈՒՄ) հասարակական կազմակերպությունը, ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Սոցիալական գործընկերությունը և զարգացում. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար» կոնսորցիամային ծրագրով ՀՀ Սյունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի՝ կապան, Գյումրի և Իջևան համայնքներում նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք:

Համայնքահեն քննարկումների ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները: Քննարկումները, որոնց մասնակցել են հանրապետության ավելի քան 129 քաղաքացի, իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Շիրակի մարզի Գյումրի և Տավուշ մարզի Իջևան համայնքներում: Քննարկումներին մասնակցել են վերոնշյալ մարզերի ՄԿՈՒ և հանրակրթական ուսումնական հաստատությունենրի աշխատակիցներ, ՏԻՄ-երի և ՔՀԿ-ների ներկայացուցիչներ:

2. Մեթոդաբանություն

Միջին մասնագիտական կրթության և աշխատաուկայի, հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերիայի ուղղորդման վերաբերյալ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոն/ ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով: Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ: Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները: Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

3. ՀՀ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա կապի և հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրներ և լուծման առաջարկություններ ՀՀ Սյունիքի մարզում

ՄԿՈՒ և աշխատաշուկա

Հիմնախնդիրներ

1. ՄԿՈՒ հաստատությունների կողմից առաջարկվող կրթական ծառայությունների անհամապատասխանությունը գործատուների պահանջներին
2. Գործատու-ՄԿՈՒ թույլ կապը
   - պրակտիկա
   - հետաքրքրասիրություն
   - պահանջարկ
3. Գործատուների ոչ պրոֆեսիոնալ մոտեցումները,
   - Ազգակցական կապեր
   - Միայն ԲՈՒՀ-ի շրջանավարտ և այլն,
4. Աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանող մասնագիտությունների առկայությունը քոլեջներում,
5. Հասարակության վերաբերմունքը ՄԿՈՒ համակարգի նկատմամբ ցածր է։

Առաջարկություններ/լուծումներ

1. Մոդելի բացակայություն
   - Դպրոց
   - ՄԿՈՒ
   - Աշխատաշուկա
   - Գործատու
   - Պետական քաղաքականություն
2. Բարձրացնել ԲՈՒՀ-ի շեմը, միավորը

Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական համակարգի հանրակրթական հաստատություններում

1.Հիմնախնդիրներ

1. Մասնագիտությունների դերի կարևորում կրթական չափորոշիչներում,
2. Ուսումնական պլաններում համապատասխան դասընթացի բացակայություն,
3. Արհեստանոցների և լաբորատոր սարքավորումների բացակայություն (մասնագիտությունների համահունչ զարգացնող միջավայր դպրոցում)
4. Մասնագիտական կրթության դերի կարևորման նպատակով դպրոց-աշխատաշուկա կապը ակտիվացնել ուսումնաարտադրական պրակտիկայում (նյութական միջոցների բացակայություն),
5. Ծնողների կարծրատիպերի առկայություն

Լուծման առաջարկություններ.

1. Մասնագիտությունների ցանկի ընդլայնում (ապագայի պահանջով),
2. Կրթության որակի բարելավում,
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներով դպրոցների և ՄԿՈ հաստատությունների վերազինում,
4. Միջին և նախնական մասնագիտական կրթությունը լինի անվճար,
5. Ուս. պլանում և առարկայական ծրագրերում ներառել մասնագիտական կողմնորոշում առարկան,
6. Աշխատաշուկայում ն/մ և մ/մ կրթություն ունեցողների պահանջարկի և դերի կարևորում,
7. Մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
8. Արտադրական պրակտիկաների կազմակերպում հիմնարկ-ձեռնարկատիրություններում՝ ստեղծելով մոտիվացիա ուսանողների համար,
9. Ձևավորել մասնագիտություններին համահունչ զարգացնող միջավայր դպրոցում,
10. ԲՈՒՀ-երի ընդունելության որակի կտրուկ բարձրացում,
11. ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ և ընդգրկել մասնագիտական կրթության մեջ

2.Հիմնախնդիրներ

1. Հանրակրթության ոլորտում մանկավարժների կողմից աշակերտներին մասնագիտական կողմնորոշման ճիշտ ուղղորդմանն ուղղված գործունեության բացակայությունը կամ կարողությունների ցածր մակարդակը,
2. Մասնագիտական կրթության համակարգային ռազմավարության բացակայությունը,
3. Կարիերայի ուղղորդման և մասնագիտական կրթությանն ուղղված հմտությունների բացակայությունը,
4. Դասընթացներն անցկացվում են դասերից հետո, ինչն ավելորդ ծանրաբեռնվածություն է առաջացնում և աշակերտների, և դասընթացավարների համար,
5. Դասընթացները փոքր դպրոցներում անցկացնելու համար ստիպված ընդգրկվում են տարբեր տարիքի երեխաներ, որոնց համար ստիպված նույն թեման է անցկացվում:
6. Վերապատրաստումների բացակայությունը,
7. Ուսումնաճանաչողական այցերը լինի համակարգված /այցի ժամանակ համապատասխան մասնագետները վարեն ճանաչողական այցերը/
8. Կապանում բացակայում է մասնագիտական կողմնորշման մեթոդական կենտրոնը.

Լուծման առաջարկություններ.

1. Հաստիքի իջեցում/Մասնագիտական կողմնորոշման մասնագետ,
2. Պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ,
3. Ուսումնական պլանով ժամի հատկացում/որպես առարկա/
4. Դպրոցներին տրամադրել մեթոդական նյութեր/պլաններ, ձեռնարկներ, տեսաերիզներ/
5. Կապանում հիմնել մասնագիտական կողմնորշման մեթոդական կենտրոն

4. ՀՀ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա կապի և հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրներ և լուծման առաջարկություններ ՀՀ Տավուշի մարզում



Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի առկա խնդիրները և աշխատաշուկա

1. Մոդուլային համակարգի վերաբերյալ
2. Ուսուցումը լինի մասնագիտական գրքերով
3. Պրակտիկաները անցկացվեն համապատասխան մասնագիտական վայրերում
4. Քոլեջի շրջանավարտները կարողանան բարձրագույն կրթությունը շարունակել ցերեկային ուսուցմամբ,
5. Սոց. փաթեթի բացակայությունը,
6. Դպրոցում թյուր տեղեկատվությունը քոլեջի վարբերյալ

Լուծման առաջարկություններ.

1. Փոխել մոդուլային համակարգը, կրթության մեթոդները, գրքերը, տետրերը, օրագրերը,
2. Պրակտիկաները անցկացվեն համապատասխան վայրերում, որպեսզի դա նաև լինի նախնական աշխատանքային փորձ աշխատանքի տեղավորվելիս այդ հանգամանքը հաշվի առնվի.

- Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական համակարգի հանրակրթական հաստատություններում

Հիմնախնդիրներ

1. Արտադպրոցական պրակտիկայի բացակայություն,
2. Որակյալ մասնագետների պակաս,
3. Ուսուցչի ցածր վարձատրություն,
4. Մասնագիտական կողմնորոշման ծրագրի բացակայություն,
5. Նյութատեխնիկական բազայի բացակայություն.

Լուծման առաջարկություններ.

1. Համապատասխան պետական մոտեցում,
2. Ձևավորել համագործակցություն մարզի ձեռներեցների հետ
3. Վերապատրաստումներ, մասնագետների ատեստացիա, խրախուսման համակարգի ներդրում,
4. Փոխել պետական վերաբերմունքը,
5. Պետական ծրագրերի վերանայում,
6. Պետական բյուջեից անհրաժեշտ հատկացումներ մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման համար.

5. ՀՀ միջին մասնագիտական կրթություն և աշխատաշուկա կապի և հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրներ և լուծման առաջարկություններ ՀՀ Շիրակի մարզում

ՄԿՈՒ և աշխատաշուկա

1. **Հիմնախնդիրներ**
   1. ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների համար պրակտիկայի հնարավորության սահմանափակ լինելը կամ բացակայությունը,
   2. Աշխատաշուկայում վստահություն պակասը ՄԿՈՒ շրջանավարտի նկատմամբ/փորձի բացակայությունը/,
   3. Աշխատաշուկայում տարիքային սահմանափակումները։

Լուծման առաջարկություններ.

1. ՄԿՈՒ հաստատությունների կողմից ուսանողների համար հնարավորությունների ընդլայնում(կապեր բիզնեսների հետ, սեփական արտադրական հնարավորությունների ստեղծում) տեսական գիտելիքները պրակտիկայում կիրառելու համար,
2. Գործատուներին ընդգրկել պրակտիկաների կազմակերպման գործընթացներում և ձևավորել վստահություն ՄԿՈՒ հասատատության շրջանավարտների նկատմամբ,
3. Գործատուների պատվերով կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստումներ և առանց հաշվի առնելու տարիքը՝ լավագույններին ընդունել աշխատանքի։

2. Հիմնախնդիրներ

1. ՄԿՈՒ հաստատությունների կրթության որակը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին,
2. Վերապատրաստված մանկավարժները չեն վարձատրվում մասնագիտական կողմնորոշման դասընթացները սիստեմատիկ իրականացնելու համար,
3. Ցածր վարձատրվող աշխատանքը,
4. Աշխատաժամերի սխալ բաշխումը։

Լուծման առաջարկություններ.

1. Երկարաժամկետ և որակյալ աշխատանքային պրակտիկա ուսանողների համար,
2. Համապատասխան վարձատրություն ապահովել մանկավարժների համար,
3. Բարձր աշխատավարձ՝ մատուցած ծառայությանը համապատասխան։

3. Հիմնախնդիրներ

1. ՄԿՈ հաստատությունների շրջանավարտները գործ չեն կարողանում գտնել աշխատաշուկայում
2. ՄԿՈ հաստատությունների և նրանց կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ հասարակության համար հասանելի տեղեկատվության պակաս։

Լուծման առաջարկություններ.

1. Կատարել ՄԿՈՒ հաստատությունների իրավական կարգավիճակի փոփոխություն՝ գրավիչ և հեռանկարային դարձնելով ՄԿՈՒ հաստատության կողմից տրամադրվող ծառայությունները,
2. Ստեղծել գործատուների հետ շարունակական աշխատանքի և համագործակցության զարգացման հարթակներ,
3. Պարբերաբար կազմակերպել ՄԿՈՒ հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ իրազեկման քարոզարշավներ (հանրային հանդիպումներ, սեմինարներ, հաղորդաշարեր, բուկլետներ, պաստառներ)։

4. Հիմնախնդիրներ

4. ՄԿՈՒ հաստատությունների կողմից մատուցված կրթական ծառայությունների որակը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին,
5. ՄԿՈՒ հաստատությունների նյութատեխնիկական բազայի աղքատ վիճակը կամ բացակայությունը,
6. Երիտասարդների ոչ լիարժեք մոտիվացիան մասնագիտական և արհեստագործական կրթության նկատմամբ,
7. Աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության պակասը։

Լուծման առաջարկություններ.

8. Պատրաստել և ներդնել ՄԿՈՒ հաստատություններում գործընթացի ճկունություն ապահովող ծրագրեր, մոդելներ, որոնք լինեն ժամանակին համահունչ և համապատասխան,
9. Գործատուներին ներգրավել նյութատեխնիկական բազայի թարմացման գործընթացին,
10. Ընդլայնել պրակտիկա կազմակերպելու հնարավորությունները, այդ աշխատանքում ներգրավելով և համայնքապետարանին, և մարզպետարանին, և դոնորներին, և մասնավոր հատվածին,
11. Մասնագիտական կրթության և մասնագիտությունների վերաբերյալ իրազեկության բարձրացումը սկսել մանկապարտեզից, ընտանիքից և շարունակել դպրոցում,
12. Ծնողների հետ հետևողական և ինտերակտիվ աշխատանքներ իրականացնել՝ հաղթահարելով մասնագիտական կրթության և մասնագիտությունների վերաբերյալ առկա կարծրատիպերը և նրանց ներգրավել աշակերտների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում։

5. Հիմնախնդիրներ

1. Այսօր աշխատաշուկան պահանջում է, որ աշխատողը պարտադիր օտար լեզու իմանա, ունենա բարձրագույն կրթության դիպլոմ և աշխատանքային փորձ: Իսկ այդ ամենը քոլեջն ավարտելով չեն կարող ունենալ,
2. Շատ անգամ գործատուն չի վստահում միջին մասնագիտական կրթություն ունեցող շահառուին և ինքն է նախաձեռնում դասընթաց անցկացնել և պատրաստել իր աշխատակցին,
3. Շուկայում առկա է անհամապատասխանություն առաջարկի և պահանջարկի միջև և շատ հաճախ շուկայում կա մասնագետների ավելցուկ,

Լուծումներ

1. Քոլեջը, բացի լավ մասնագետներ պատրաստելուց, պետք է շեշտը դնի նաև օտար լեզվի դասավանդման արդյունավետության վրա
2. Անհամապատասխանությունը փոքր-ինչ մեղմելու համար պետք է մշակել գործատուների հետ համագործակցության նոր կանոններ և նրանցից եկող ազդակները նկատի ունենալ.

6. Հիմնախնդիրներ

1. Գործատուն չի վստահում ՄԿՈՒ հաստատության շրջանավարտներին՝ պահանջելով աշխատանքային փորձ,
2. Մասնագիտության հետ զուգահեռ գործատուն պահանջում է նաև բարձրագույն կրթություն,
3. Աշխատաշուկայում պահանջվում է օտար լեզվի իմացություն, առկա է տարիքային սահմանափակումը,

Լուծման առաջարկություններ

1. Հնարավորություն տալ շրջանավարտներին ձեռք բերելու աշխատանքային հմտություններ և կարողություններ
2. Հնարավորություն տալ շրջանավարտներին, որպեսզի կարողանան ստանալ բարձրագույն կրթություն,
3. Ավելացնել օտար լեզվի ժամաքանակը և բարելավել օտար լեզվի դասավանդման պայմանները և դասավադման մեթոդիկան.

7. Հիմնախնդիրներ

1. Քոլեջի ուսանողի ցածր ստատուսը,
2. Տարբերությունը քոլեջի և բուհ-ի միջև,
3. Դասավանդող դասախոսների մասնագիտական ցածր կարողությունները,
4. ՄԿՈՒ հաստատություններում նորագույն տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակը,
5. Սոցիալական փաթեթների բացակայությունը ՄԿՈՒ հաստատությունների աշախատակիցների համար,
6. Աշխատավարձի տարբերությունը հանրակրթական և միջին մասնագիտական ուս. հաստատության միջև,

Լուծման առաջարկություններ.

1. Քոլեջում սովորողի ստատուսի բարձրացում,
2. Տարբերություն չդնել քոլեջի և բուհ-ի միջև
3. Հաճախակի կազմակերպել դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ
4. Ապահովել նորագույն տեխնոլոգիաներով քոլեջների հագեցվածությունը և դրանց գործնական կիրառումը ուսումնական գործընթացում,
5. Սոցիալական փաթեթների տրամադրում քոլեջների աշխատակիցներին,

6. Բարձրացնել ՄԿՈՒ հասատատությունների աշխատակիցների աշխատավարձերը և գրավիչ դարձնել ՄԿՈՒ հաստատությունում աշխատելը,
7. Պարբերաբար կազմակերպել էոլեջների դասախոսների վերապատրաստումներ և պարբերաբար իրականացնել ատեստավորում,

Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական համակարգի հանրակրթական հաստատություններում

1. Հիմնախնդիրներ
    1. Ուսուցչի մոտիվացիայի պակասը,
    2. Լավ որակավորում ունեցող մասնագետների պակասը,
    3. Գործատուների հետ համագործակցության թույլ մակարդակը.

Լուծման առաջարկություններ.

1. Մասնագիտական կողմնորոշման մասնագետի հաստիք հատկացնել դպրոցում, որի հիմնական գործառույթը կլինի զբաղվել աշակերտների մասնագիտական կողմնորոշմամբ,
2. Աշակերտների համար ստեղծել գործնական հմտությունների զարգացման հնարավորություններ,
3. Դպրոցում ներդնել ոչ ֆորմալ կրթության հնարավորություններ՝ կազմակերպելով կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ, սեմինարներ: Այս աշխատանքներում կարող են ընդգրկել ոլորտային փորձառու հասարակական կազմակերպությունների,
4. Պարբերաբար կազմակերպել ուսումնաճանաչողական այցեր հանրային և մասնավոր հաստատություններ/կառույցներ՝ խթանելով համագործակցությունը դպրոցների և հանրային/մասնավոր հատվածների միջև,

2. Հիմնախնդիրներ
    1. Դպրոցում համապատասխան մասնագետի բացակայությունը /իր առաքելությանը և գործառույթներին անտեղյակ լինելը/, բացառությամբ ՎՎ-ի կողմից աջակցություն ստացող դպրոցների,
    2. Ծնողների անտեղյակությունը և համագործակցության ցածր մակարդակը դպրոցի հետ,
    3. Աշխատաշուկայի իրական պատկերի մասին տեղեկատվության պակասը ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների և ծնողների մոտ,

Լուծման առաջարկություններ.

1. Մանագիտական կողմնորոշման մասնագետների պատրաստում և հաստիքի հատկացում դպրոցներին,
2. Ֆինանսական միջոցներով հագեցած ծրագրեր,
3. Ծնողների շրջանում իրականացնել իրազեկության բարձրացմանը ուղղված կրթական ծրագրեր,
4. Աշխատաշուկայի իրական պատկերի հանրայնացում (համայնքներում պարբերաբար կազմակերպել աշխատաշուկայի հետազոտություններ,

հաղորդումների պատրաստում, քննարկումների, իրազեկման ակցիաների կազմակերպում),

3. Հիմնախնդիրներ

1. Դպրոցներում մասնագիտական կողմորոշում առարկան դասաժամ չի համարվում
2. Երեխաները չունեն գործնական հմտությունները զարգացնելու համապատասխան հնարավորություններ,
3. Աշխատաշուկայում համապատասխան աշխատատեղերի բացակայությունը, որը ապամոտիվացնում է ինչպես աշակերներին, այնպես էլ ուսուցիչներին.

Լուծման առաջարկություններ.

1. Դպրոցներում մասնագիտական կողմնորոշում առարկան դարձնել պարտադիր ուսումնական դասաժամ,
2. Գտնել համապատասխան դոնոր կազմակերպություններ կամ հովանավորներ և նրանց միջոցով դպրոցներում ստեղծել արհեստանոցներ և ուսումնաարտադրական հնարավորություններ,

4. Հիմնախնդիրներ.

1. Հանրակրթական դպրոցի հիմնախնդիրը համապատասխան դասաժամ չունենալն է, որի պատճառով մասնագիտական կողմնորոշման դասընթացը խիստ արդյունավետ է,
2. Աշակերտներն ավարտելով դպրոցը ձեռք են բերում մասնագիտություններ, որոնց պահանջարկը տարածաշրջանում գրեթե չկա, տեղի է ունենում մասնագետների լճացում,
3. Կան մասնագետներ, որոնց աշխատավարձը այնքան ցածր է, որ չեն էլ ձգտում աշխատել/երգ-երաժշտություն, կերպարվեստ/

Լուծման առաջարկություններ

1. Դպրոցական ուսպլանն ունի բաղադրիչ դասաժամերի ցանկ, որից կարելի է դասաժամ տրամադրել մասնագիտական կողմնորոշման ուսուցման համար,
2. «Մասնագիտական կողմնորոշում» առարկայի դասավանդումը կնպաստի դպրոցների ավագ դասարանների շրջանավարտներին պատկերացում կազմել տարածաշրջաններում պահանջարկ ունեցող մասնագիտությունների մասին: Այս դեպքում կհեշտանա աշխատաշուկայում որակյալ մասնագետներ ունենալը,
3. Անհրաժեշտ է պետական մոտեցում ցույց տալ քիչ դասաժամեր ունեցող առարկաների մասնագետներին

5. Հիմնախնդիրներ.

1. Ծնողների կողմից չկա վստահություն, որ իր երեխան ստանալով միջին մասնագիտական կամ արհեստագործական կրթություն, ապագայում կունենա վարձատրվող հիմնական աշխատանք,

2. Չկան բավարար քանակով գործարաններ, ֆաբրիկաներ և ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որտեղ այցելելով երեխաները կծանոթանան մասնագիտություններին և կկարողանան կողմնորոշվել,
3. Աշխատաշուկայում առկա մասնագիտությունների համար սահմանված ցածր աշխատավարձը, որի պատճառով աշակերտը հասկանում է, որ հետագայում չի կարողանա ապրել,
4. Օտար լեզուների վատ իմացությունը,

Լուծման առաջարկություններ

1. Սեմինարներ անցկացնել ծնողների հետ միջին մասնագիտական կրթության վերաբերյալ՝ բարձրացնելով նրանց իրազեկությունը.
2. Ապահովել նոր գործատուների, ինչպես նաև արդեն գործող գործարանների հասանելիություն աշակերտներին,
3. Հանրակրթական դպրոցներում և Միջին մասնագիտական հաստատություններում օտար լեզուների խորացված ուսուցումը բարձր հիմքերի վրա դնել և լուրջ պետական մոտեցում ցուցաբերել.